բանակների դէնքի յաջողութեան և արժանացաւ անգլիական ու ֆրանսական հրամանատարութեան գովասանքին ու բարձր գնահատութեան։

Բացի զուտ ազգային ձեռնարկներից՝ հայ կամաւորական խմբեր և անհատ մարտիկներ մասնակցեցին պատերազմին և ուրիշ ճակատներում՝ դաշնակիցների զանազան զօրամասերի մէջ — ֆրանսական և ամերիկեան բանակներում։ Եթէ հաշուելու լինենք բոլոր ճակատներում և բոլոր բանակներին մասնակցող հայ զինուորների ու կամաւորների ընդհանուր թիւը, հայ ժողովուրդը, ամենահամեստ հաշուով, մօտ 300,000 կուռղ տրամադրեց դաշնակիցներին պատերազմի ամբողջ տեւողութեան ընթացքին։ Եւ վարձատրութի՞ւնը...

Ռուսաստանում տեսանք այդ վարձատրութիւնը—բացարձակ խաբէութիւն ու զրկանք։ Նոյնը կատարուեց և Եւրոպայում։ Մի կողմից ֆրանսական և անգլիական կառավարութիւնները հրապարակով յայտարարում էին, որ պատերազմի նպատակներից մէկն էլ Հայաստանի ազատագրութիւնն է, միւս կողմից, դիւանագիտական առանձնասենեակներում, գաղտնի կերպով բանակցում էին Հայաստանի բաժանման մասին։ Հայաստանի անդամահատութեան ծրագիրն, ի վերջոյ, հաստատուեց առանց հաշուի առնելու հայ ժողովրդի շահերն ու բաղձանքները։

Այսպիսով, թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում հայ ժողովրդի բոլոր յոյսերն ի դերեւ ելան։ Խաբուած ու լքուած դաշնակիցներից, աւերուած ու ջարդուած իր հայրենիքում, ծանրաբեռնուած հարիւր հազարաւոր զաղթականներով ու պատերազմի զոհերով, առանց հեռանկարի, հայ ժողովուրդը նմանը չտեսած տագնապով ոտք կոխեց 1917 թուականը։ Եւ ով գիտէ ի՞նչ կը լինէր վախճանը, եթէ վրա չհասնէր հրաշքը —

1917 թուի փետրուարին, բոլորովին անսպասելի կերպով, պայթեց Ռուսական Մեծ Յեղափոխութիւնը։

———————